ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» ____ 2026թ. **N_____ -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N 405-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 5-րդ կետում «քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունը,» բառերը փոխարինել «շինարարության և բարեկարգման, քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունները,» բառերով.

2) 7-րդ կետի 12-րդ ենթակետի «է» պարբերությունում «հատվածները,» բառից հետո լրացնել «, ապահովել խրամուղու ամբողջ երկայնքով վերականգնվող հատվածի առանց շեղումների՝ մեկ ընդհանուր և ուղիղ եզրագիծ, ճանապարհի երթևեկելի գոտու կամ մայթի տվյալ հատվածի ասֆալտ-բետոնյա նոր ծածկի ստեղծում,» բառերը.

3) 7-րդ կետի 12-րդ ենթակետի «ը» պարբերությունում «խճածածկի» բառից հետո լրացնել «(խճածածկը ամբողջությամբ պետք է պատված լինի բիտումային էմուլսիայով)» բառերը.

4) 7-րդ կետի 12-րդ ենթակետի «ժդ» պարբերությունում «50» թիվը փոխարինել «5» թվով, իսկ «100» թիվը «10» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընթացիկ կարգավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշման հավելվածով (այսուհետ՝ Կարգ) սահմանվել են արտաքին ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (մոնտաժման, վերակառուցման, վերատեղադրման, տեղափոխման, վերանորոգման, վերականգնման և այլն) նպատակով համաձայնեցված հետագիծ-նախագծային փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվությամբ իրականացվող քանդման և վերականգնման աշխատանքների ժամանակ կառուցապատողների կողմից պարտադիր կատարման ենթակա միջոցառումների և պայմանների ցանկը:

Նույն կարգի 7-րդ կետի 12-րդ ենթակետի է) և ը) պարբերություններում սահմանված են ինժեներական ենթակառուցվածքների համար փողոցներում, մայթերի վրա, բակերում և այգիներում ասֆալտբետոնյա և սալիկապատ ծածկերի քանդման և վերականգման աշխատանքներին ներկայացվող պահանջներն ու տեխնիկական պայմանները:

Երևան քաղաքում խրամուղիների վերականգնումից հետո պարբերաբար նկատվում են նստվածքներ, ճանապարհների և մայթերի ծածկի որակի և տեսքի վրա բացասաբար ազդող անկանոն և ոլորաձև հետագծեր:

Ըստ այդմ էլ ներկայացված լրացմամբ առաջարկվում է, որ խրամուղու չափերից դուրս վնասված հատվածները ներառելով մեկ երկրաչափական տեսքի մեջ ապահովել խրամուղու ամբողջ երկայնքով վերականգնվող հատվածի առանց շեղումների մեկ ընդհանուր եզրագիծ, ճանապարհի երթևեկելի գոտու կամ մայթի տվյալ հատվածի ասֆալտբետոնյա նոր ծածկի ստեղծում:

Այս պահանջի կիրառման և պահպանման դեպքում՝ հնարավոր կլինի խուսափել ճանապարհի երթևեկելի գոտիների և մայթերի անորակ վերականգնումից և նույն գոտու վրա խրամուղիների երկայնքով անկանոն կարկատանների և ոլորաձև հետագծերի առկայությունից:

Գործող Կարգով սահմանված լրացուցիչ պայմանների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների ցանկում առաջարկվում է ավելացնել քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը, քանի որ նշված վարչության կողմից են իրականացվում մայրաքաղաքում փողոցների, մայթերի և այլ ընդհանուր օգտագործման համայնքային տարածքների շինարարության,

հիմնանորոգման, վերականգման և ընթացիկ սպասարկման աշխատանքները: Ինժեներական ենթակառուցվածքների տեղադրման նպատակով խրամուղիների քանդման և վերականգման աշխատանքների և ավագանու լրացուցիչ պայմանների պահպանման նկատմամբ նման լիազորության պարագայում կիրականացվի ավելի արդյունավետ և մասնագիտական հսկողություն:

Կարգի 7-րդ կետի 12-րդ ենթակետի ժդ) պարբերությունում թվերի փոփոխությունները կրում են տեխնիկական բնույթ: Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերին համապատասխան գարնանն ու աշնանը տաք և սառը խառնուրդներ կարող են տեղադրվել, եթե շրջակայքի ջերմաստիճանը համապատասխանաբար 5 C-ից և 10 C-ից ցածր չէ: Գործող կարգում «50» և «100» թվերը տեխնիկական վրիպակի արդյունք են:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ